# ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1-03/31

*24.06.2024թ. կնքված № ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-11/24-03/31 ծածկագրով պայմանագրի*

ք. Մեծամոր 02. 07. 2026թ.

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝** ի դեմս **«ՀԱԷԿ» ՓԲԸ** գլխավոր տնօրենի տեղակալ-ընդհանուր հարցերի գծով տնօրեն Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից 06.05.2026թ. տրված լիազորագրի հիման վրա և

**ԿԱՏԱՐՈՂԸ՝** ի դեմս **«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ** տնօրեն Լևոն Ազիզյանի

կնքեցին սույն Լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին.

Առաջնորդվելով ընկերությունների միջև 24.06.2024թ. կնքված № ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-11/24-03/31 Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) դրույթներով, մասնավորապես՝ Պայմանագրի 7.5 կետով, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին (Հիմք՝ ԳԲ պետի զեկուցագիր №1405 առ 18.06.2026թ., ՀՀ Կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի թիվ 81-Ն որոշման).

**Կողմերը** որոշեցին՝

1. Պայմանագրի հավելված 1-ում նշված (7 (յոթ) հատ) հորատանցքների թիվը ավելացնել 1 (մեկ) հատով (8 (ութ) հատ):
2. Լրացուցիչ ծառայության արժեք սահմանել **36000 ՀՀ դրամ**:
3. Պայմանագրի 4.1 կետը՝ «Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1728360 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանութ հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱՀՀ-ն 288060 ՀՀ դրամ», շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1764360 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր վաթսուն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱՀՀ-ն 294060 ՀՀ դրամ»:
4. Պայմանագրի մյուս դրույթները թողնել անփոփոխ:
5. Սույն Լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 24.06.2024թ. կնքված № «ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-11/24-03/31» Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև պայմանագրի ամբողջ կատարումը:
6. Սույն Լրացուցիչ համաձայնագիրը կնքված է երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «ՀԱԷԿ» ՓԲԸ | «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ |
| ԳՏՏ-ԸՀՏ՝ | Տնօրեն՝ |
| ........ Ս. Մաթևոսյան | ........ Լ. Ազիզյան |
| Կ.Տ. | Կ.Տ. |